ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ. Վ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում երկրագործության կարևոր ճյուղերից մեկն էր այգեգործությունը։ Այգեգործության մասին վկայությունները շատ են հատկապես մատենագրական աղբյուրներում։ «Ցիւրաքանչիւր ժամանակ և մարդկային հասակն՝ ումեք որ հետևին երկրագործութեան ամենայնիւ առավելութեամբն ազնիւ է տղայական և մանկութեան հասակն»,—կարդում ենք «Գիրք վաստակոցում»[1]։

Ֆրիկի մի բանաստեղծության մեջ առանձնացվում է այգու մշակման հինգ գործողություն.

«Ձիս յոտէ և խոր փորէ,
Որ ես զարթչիմ զուարթանամ...
Առոգա յորդ վտակով,
Որ կանաչեմ և մանկանամ...
Ցիս սրնոյ և դարմանէ,
Որ ի ժամու պտուղ քեզ տամ»[2]
(ընդգծումը մերն է—Հ. Բ.)։

Միջնադարյան Հայաստանում այգեգործությունը, տնկագործությամբ զբաղվելը համարվել է պատվավոր գործ։ Մխիթար Գոշն իր հոդվածներից մեկում դատապարտում է այն մարդկանց, ովքեր չարամտորեն այգի են հատում. «Շարժեալ ոք սատանայական ցասմամբ հատանիցէ զտունկ ուրուք. եւ յայտ ճշտիւ գայցէ դատաստան լիցի դնել զտունկն հատողին եւ յիւրոցն՝ զամսն, ցորքան անպտուղ իցէն տունկն, տուժիլ նովին չափով, ապա թէ իւր չիցէ՝ ըստ գնոյն լիցի»[3]։ Նույն դրույթը արտահայտվում է նաև նրա առակներից մեկում. «Ի մաստասէր ոմն ետես զտնկագործ, զի հատանէր և տընկէր...»[4]։ Բերվածից պարզ է դառնում, որ ծառ կտրողը պարտավոր էր փոխարենը նորը տնկել և կտրած ծառի ամենամյա բերքի չափով վճարել տիրոջն այնքան ժամանակ, քանի դեռ տնկած ծառը չէր պտղաբերել։ Օրենքի նմանատիպ ձևակերպում ունի Սմբատ սպարապետը[5], իսկ «Կանոնագիրք հայոցը» նշում է. «Վասն որ զայգի հարկանէ առ չարի՝ Գ ամ ապաշխարեսցէ»[6]։

Տնկագործությունը որպես ինքնուրույն արհեստ հիշվում է դեռևս V դարից[7]։ «Էգեպանությունը» կամ այգեպանությունը դասվել է այնպիսի զբաղ-

---

1 «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1877, էջ 2։

2 Բ. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. 1, Երևան, 1964, էջ 164)։

3 Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի (այսուհետև՝ Գոշ), Երևան, 1975, էջ 67։

4 «Առակք Մխիթարայ Գոշի», Վենետիկ, ՍԲ Ղազար, 1854, էջ 139։

5 Смбат Спарапет, Судебник (Այսուհետև՝ Սմբատ Սպարապետ), Ереван, 1958, с. 23.

6 «Կանոնագիրք հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 260։

7 «Սրբոյն քերթողահօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ նախակրթութիւն հոետորական ասացեալ Գիրք պիտոյից» (այսուհետև՝ «Գիրք պիտոյից»), Վենետիկ, 1796, էջ 385։

մունքների շարքում, ինչպիսիք են բազազությունը[8], կտավագործությունը[9], ջուլհակությունը և գինեծախությունը[10]։

Հովհաննես Դրասխանակերտցին մի առիթով հիշատակում է «մրգապահ» տերմինը այգեպան իմաստով. «...իբրև զհովանի մրգապահաց ի մէջ սեզխենեաց»[11]։

Հետաքրքիր է, որ միջնադարյան Հայաստանում այգիներ են տնկել ոչ միայն ֆեոդալական տների, վանական եղբայրությունների, այլև «կարոտյալների» համար։ Այդ տեսակետից ուշագրավ վկայություններ են պահպանվել Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ։ Նա հաղորդում է, որ Գնդեվանքը կառուցող Սյունյաց Սոփիա իշխանուհին վանքին է նվիրում երկու գյուղ. «Իսկ զձորն ամենայն ի վեր,—շարունակում է պատմիչը,—և ի վայր մինչ ի Գոլոշտին քարն հրամայէ առնել տնկախիտս ի մրգաբերեաց ծառոց և յանուշաճաշակ պտղոց, և տնկեալ այգիս վայելուչս յոյժ բարութեամբ ի վայելումն առատապես սուրբ եղբայրութեանն և ամենայն կարոտելոց»[12]։ Մի այլ տեղում, խոսելով Սյունյաց Հակոր եպիսկոպոսի մասին, Օրբելյանը գրում է. «Տնկեաց բազում այգիս և որթս սորեկս էարկ տունկս զանազան պտղաբերաց արար դրախտս զարմանալիս, և ղարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառովք և քաջուղէղ որթովք ի վայելումն եղբայրութեանն և ի պէտս ամենայն կարօտելոց և աղքատաց»[13]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ տնկված այգիները մատչելի են եղել բոլորի և հատկապես՝ ուխտավորների ու աղքատների համար։ Սյունյաց պատմիչի մի այլ վկայությունից էլ տեղեկանում ենք, որ այգիներ են տնկվել նաև ուրկանոցների համար. «Իսկ Աբլ Արաս և Վաչագան խնդրեալ յիշխանէն Սիւնեաց, սահման հատին վանացն և ետուն հինգ գիւղ, սկիզբն արարեալ ի Սևուսարէ՝ ածէն ի Բոթիբոթեր ի վար և յարաբ ի ջուր Թզենւոյն և յայգեստան ուրկանոցին»[14]։

Աղբյուրներում իրարից զանազանվում են այգեստանը, բուրաստանը կամ ծաղկոցը։ Մովսես Խորենացին պարզորոշ նշում է, որ բուրաստանը «զոյս յականէի սքանչելի գեղեցկութիւն վայելչացեալ զվայրն. ուստի զուգախաղաց հասարակութեամբ նոյնպէս կրկնակի սփոփանք խրախմիտ զուարթութեց յառաջնային ընծայել բուրումն հեշտալի հոտոտելեաց, և փայլող գեղեցկագունութիւն զուարճացումն տեսանելեաց»[15]։ Իսկ Բարսեղ Կեսարացին գրում է. «Եւ յաւրինեալ զարդարեցան դաշտք ամենայն դրախտիւք եւ բուրաստանք եւ նկարեալ գետովքն»[16]։ Հովհաննես Դրասխանակերտցին կողք կողքի հիշատակում է «բուրաստանն» ու «այգեստանը»[17]։ Ստեփանոս Օրբելյանն էլ խոսելով Որոտանի ձորի մասին, ասում է. «Զորն այն լի այգեստանեօք և դրախտացեալ զանազան բուրաստանօք»[18]։ Մի այլ առիթով էլ նա հաղորդում է, որ Սյունյաց Սոփիա իշխանուհին Հերմոնի վանքին է նվիրել «յայգիս և ծաղկոցս յՆղեգիս»[19]։

8 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 366։

9 Նույն տեղում, էջ 367։

10 Նույն տեղում, էջ 428։

11 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց (այսուհետև՝ Դրասխանակերտցի), Թիֆլիս, 1912, էջ 222։

12 Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական (այսուհետև՝ Օրբելյան), ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 190—191։

13 Օրբելյան, էջ 185։

14 Նույն տեղում, էջ 61—62։

15 «Գիրք պիտոյից», էջ 388։

16 Բարսեղ Կեսարացի, Յաղագս վնցաւրեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984, էջ 160։

17 Դրասխանակերտցի, էջ 139։

18 Օրբելյան, էջ 147։

19 Նույն տեղում, էջ 189։

Այստեղից պարզ է, որ ծաղկոցը կամ բուրաստանը նույն իմաստն են արտահայտել և նշանակել են պարտեզ, ծաղկանոց։

Միջնադարյան հայ մատենագրության մեջ վկայություններ են հանդիպում նաև զբոսայգիների մասին։ Այսպես՝ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ ոմն Գառնիկ գտնելով Գրիգոր Լուսավորչի աճյունը, տանում և ամփոփում է Թորդան գյուղում «ի զբոսանոց պարտիզկանն»[20]։ Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պտղատու, այլ մի այգու, որ ծառայել է որպես զբոսավայր։

Մատենագիր աղբյուրների և վիմագրերի բազմաթիվ հիշատակումներից կարելի է առանձնացնել պտղատու այգիների երեք տեսակ՝ ձեռնատունկ, կորդ կամ կորդո արկած և նորք։

Ցաղաց քարի 1317 թ. մի արձանագրություն հաղորդում է. «...եւ ետու յիմ հայրենեաց ի Սրկղունս զմեր ձեռնատունկ (սեփական ուժերով տնկված, այլ ոչ թե գնված, նվիրված, բռնագրավված, գրավի դիմաց վերցված կամ ժառանգաբար ստացված—Հ. Բ.) այգին Նորակերտ իւր ջրովն»[21]։ Հաղբատի վանքի մի ուրիշ արձանագրության մեջ կարդում ենք. «Էտու զիմ այգին զայն, որ ի գետեզերն իմ ձեռաց արկել...»[22]։ Նմանատիպ մի այգի հիմնադրելու մասին հիշում է նաև Ստեփանոս Օրբելյանը[23]։

«Նորք» կոչվող այգիների մասին վկայությունները շատ են հատկապես վիմական արձանագրություններում։ Օրինակ, Բագնայրի 1231 թ. մի արձանագրություն տեղեկացնում է, որ Վարդառյուծը, Արշակը և Խորենը միաբանել են վանքին ու նրան տվել «զՎարդենաց նորքն»[24]։ Այգու այդ տեսակն է հիշատակվում նաև Հովհաննավանքի մի արձանագրության մեջ և այլուր[25]։ Ս. Ավագյանն իրավացիորեն նոր տնկված այգին է համարում «նորք»[26]։ Նկատի ունենալով այգեգործության զարգացման բարձր մակարդակը Հայաստանում, պետք է նշել, որ նորքերը բավականին շատ էին։ Դա թելադրվում էր նաև այգիներն անընդհատ նորացնելու անհրաժեշտությամբ։

«Կորդո արկած» այգու մասին վկայություն է հանդիպում Անիի Աբլղարիր Պահլավունու եկեղեցու մի արձանագրության մեջ. «...զայգին Աշնկի որ ի կորդո արկած էր»[27]։ Մի Ավետարանի X դ. հիշատակարան հաղորդում է այն մասին, որ կատարվել է կորդ արտի վաճառք Թ (9) պոտատ դահեկանով. «...տվաքն զմեր արտն կորդեր ու զմարգն միջի Խոկայ դեղին հայրենիք ու առաք ու առաք Թ (9) պաւտատ արտին ու մարգին»[28]։ XIII դ. մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Զի թեպէտ ոչ աղբիւր ջրոյ նոր պատառեցաք և ոչ ի կորդ ագարակի սերմանց որ այս բարդից հնձեցաք, այլ միայն զխցեալ ջրհորս հարց մերոց բացաք»[29]։ Ինչպես պարզվում է վկայությունից, կորդ ագարակ յուրացնելը դժվար գործ է համարվել, քանի որ այն չէր ունենում ջրելու համակարգ, իսկ Հայաստանի կլիմայական պայ-

---

20 Դրասխանակերտցի, էջ 41—42։

21 «Դիվան հայ վիմագրության», հ. 3 (այսուհետև՝ Դիվան), Երևան, 1962, էջ 143։

22 «Վիմական տարեգիր ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց (այսուհետև՝ «Վիմական տարեգիր»), Ս. Պետերբուրգ, 1913, էջ 10։

23 Օրբելյան, էջ 266։

24 «Վիմական տարեգիր», էջ 146։

25 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 105։

26 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 241։

27 Դիվան, հ. 1, Երևան, 1966, էջ 48։

28 Գարեգին Ա Կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 148։

29 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1984, էջ 706։ «Կորդ հող» կամ «կորդ» ընդհանրապես նշանակել է անվար, խոպան, ամայի։ Ուրեմն՝ «Կորդո արկած այգի» ասելով պետք է հասկանալ խոպան, ամայի, անմշակ հողում տնկված այգի։

մաններում արդյունավետ էր հատկապես ոռոգելի երկրագործությունը։ Ջոր կլիման, անձրևների անբավարար քանակը առանց ոռոգման համակարգերի անհնարին էր դարձնում բարձր զարգացած երկրագործությունը։ Բազմաթիվ են վկայությունները ջրանցքներ հանելու, ոռոգման համակարգեր ստեղծելու վերաբերյալ։ Հայաստանի ամենահին առու-ջրանցքները, որոնք վերաբերում են նախնադարյան համայնական ժամանակներին, հայտնաբերվել են Արագածի և Գեղամա լեռների լանջերին։ Ջրանցքաշինությունը բարձր զարգացման է հասնում հատկապես Ուրարտուում։ Ջրանցքների ցանցերը տարածվում էին Վասպուրականում, Արածանիի հովտում, Արարատյան դաշտում, Ուրմիա լճի ավազանում, Մակվի դաշտում և այլուր։ Ջրտուքի մի հետաքրքիր նկարագրության ենք հանդիպում «Գիրք պիտոյիցում». «Մեծաց զարմանալեաց արժանի քան զամենայն անդէն զայն տեսանել՝ զհասակաւոր յորդումն աշխատասիրաբար երկրագործին, ընդ նմին և զշարժումն վտակախաղաց և յորդառատ ջուրցն։ ...Եւ ոչ տայր գերազանցել քան զջրոյն յառաջագէմ խաղացմունս զիւրով անդանդաղ յօժարութեն այլ որպէս զուգընթաց լինելով միշտ անվնաս ամենագեղեցիկն պահեալ նախախնամէր ոռոգանելով վայր»[30]։ Իսկ V դարի մի այլ աղբյուր ձևակերպում է. «Քանզի յաւրինուածութեան պտղոց երկրի պատճառք աւդոյն խոնաւութիւնն է»[31]։ Ադաթանգեղոսը կարևոր համարելով ոռոգումը, կարծում է, որ հարկավոր է ոռոգման ժամանակ չափը չանցկացնել, այլապես կարելի է փտեցնել ու ապականել բույսերը[32]։ Ջրանցքաշինության վերաբերյալ հայկական թվականության առաջին արձանագրությունը վերաբերում է 783 թ.։ Այն պատմում է Թալին գյուղի համար Սարկապանու դաշտից աղբյուրի ջուր բերելու մասին[33]։

Ջրանցքաշինության մասին հարուստ նյութեր են պահպանվել հայ աղբյուրներում։ Հովհաննես Դրասխանակերտցին հիշում է Սիմ լեռան ստորոտից բխող մի աղբյուրի մասին, որի ցամաքելու պատճառով «սկսաւ ապականիլ և լքանիլ պտղաբերութիւնք գեղջն և յեղծումն աւերակաց բերիլ»[34]։ Պատմիչը խոսելով Ներսես կաթողիկոսի շինարարական գործունեության մասին, վկայում է. «...և ածել ջուր ի Քասաղ գետոյ զամենայն աւազախիր առապար դաշտավայր ի գործ արկանէր»[35]։ Ստեփանոս Օրբելյանն հաղորդում է, որ Հերմոնի վանքի վանահայր Սարգիսը 1008 թ. Ձկնարած կոչվող գետի ակունքների աղբյուրների ջուրը բերում է վանք և «զամենայն զանհուն առապարն անջրդի արար ջրարբի»[36]։ Մի այլ առիթով նա մեջ է բերում Սյունյաց Սուփան իշխանի արձանագրությունը, որի մեջ Մաքենյաց վանքին տրվող նվերների շարքում հիշատակում է «հինգ կուղպակ ի յԱնի և հինգ այգի յԵրեան և հինգ հարիւր (կամ վեց առու այգիս) առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի...»[37]։ Հետաքրքիր է արձանագրության «առու այգի» արտահայտությունը։ Այն ակներևաբար նշանակում է այգու թմբերի շարքերը, որոնց մեջ առու էր բացվում այն ջրելու համար։

Ս. Բարխուդարյանը միջնադարյան Հայաստանի ջրանցքները բաժանում է չորս տեսակի. պետական, իշխանական-վանքական, համայնական և անհատական, որոնց համար կարևոր էր երկու հանգամանք. 1) ջրանցքը դառնում էր կառուցողի ժառանգական սեփականությունը, 2) մեկ անգամ ջուր

---

30 «Գիրք պիտոյից», էջ 389։

31 Բարսեղ Կեսարացի, էջ 92։

32 «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 316։

33 Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. 1, Երևան, 1964, էջ 259—264)։

34 Դրասխանակերտցի, էջ 106։

35 Նույն տեղում, էջ 88։

36 Օրբելյան, էջ 191—192։

37 Նույն տեղում, էջ 131։

ստացած և ջրովի դարձած հողաբաժինն իր մեջ էր միացնում «հող ու ջրի» միացյալ և ամբողջական իրավական հասկացությունները, իսկ հետագայում վաճառվելիս, նվիրաբերվելիս կամ ժառանգաբար անցնելիս անպայման արձանագրվում էր «հողով և ջրով» ձևակերպմամբ[38]։

Թե որքան կարևոր նշանակություն են ունեցել ջրանցքները, երևում է Սմբատ սպարապետի հետևյալ մտքից. «Եւ ջուր հանեալ ի գետոց ջրելոյ կամ ջաղացնոյ՝ չկարե ոք արգելուլ կամ ասել թե՝ սինաւուս իմ է, մի հանել ջուր, քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամեն մարդոց գետիններ ի յիր հողն և շինել ղինչ իւր պիտենայ. և չէ այն ջուրն քանց այնոր որ տարաւ գայն ջուրն հայրենիք իւր սեփական»[39]։ Մի այլ տեղ էլ Սմբատ սպարապետը պատիժ է սահմանում այն մարդկանց համար, ովքեր առվով ջուր տանելիս վնաս են հասցրել ուրիշներին[40]։

Հայաստանի յուրաքանչյուր գյուղ և յուրաքանչյուր տնտեսություն ուներ ջրի իր հերթը։ Դրա լավագույն ապացույցը Կամոյի շրջանի ներքին Ալուչալուից վերև, ճանապարհի մոտ պահպանված խաչքարի արձանագրությունն է[41]։ Ջրի օգտագործման հերթի համար բազմաթիվ վեճեր են եղել, որոնք ոչ քիչ դեպքերում վերջացել են արյունահեղությամբ։ Այդ մասին են հաղորդում Արուճի 867 թ., ինչպես նաև Ջրվեժի մի խաչքարի 1173 թ. արձանագրությունները[42]։

Ոռոգելի երկրագործության հարցերը քննարկելիս կարևորվում է ջրօգտագործման պրոբլեմը։ Խ. Սամուելյանն այն կարծիքին է, թե ջուրը իր բնական վիճակից հանվելով և իրավահարաբերությունների օբյեկտ դառնալով պատկանում է կալվածատեր ֆեոդալին՝ տիրոջ իրավունքով[43]։ Մի այլ դեպքում հենվելով Մխիթար Գոշի «Այլ գետք ուստի ակն ելանէ նոցա է, և ոչ առ ուր հասանեն» դրույթի վրա, նա պնդում է, թե գետի ակունքը պատկանում է կալվածատիրոջը, իսկ այնտեղից հոսող ջուրը՝ ոչ ոքի։ Բանն այն է, սակայն, որ Գոշի «Դատաստանագրքի» Գ խմբագրությունը համարում են ուշ ժամանակների։ Ավելի հավաստի ու հին են Ա և Բ խմբագրությունները, ըստ որոնց «Այլ գետք, յորոց հոսին սահմանաց՝ ոչ է, բայց առ ուր հասանեն»[44]։ Սրանից ելնելով կարելի է պնդել, որ գետը ոչ թե նրանն է, ում սահմաններից հոսում է, այլ՝ ով ստեղծել է ոռոգման համակարգ և ջուրը հասցրել հողին։ Դա լավ է երևում նաև Գոշի հետևյալ դրույթից. «Զի հող միայն է իշխանի եւ թագաւորի եւ ոչ ջուր»[45]։ Գոշը նաև նշում է, որ ջրովի հողերից պետք է գանձել հնգեկ, իսկ անջրդի հողերից՝ տասանորդ։ Այս առումով ճիշտ է Խ. Սամուելյանի այն դիտողությունը, թե անուղղակի հարկ է վերցվել նաև ջրից[46]։

Միջնադարյան Հայաստանում սահմանված էր ջրից գանձվող հարկ, որը կոչվել է «արգան» կամ «ավգան»։ Ըստ Ս. Բարխուդարյանի, այդ բառն առաջացել է պարսկերեն «ԱՐ» կամ «ԱԲ» ձևից, որ իրաներենում ճիշտ երկու ձևով էլ գործածական է և նշանակում է ջուր։ Իսկ «գանը» ածանց է, որ իրաներենում «գանէ», «անէ» ձևն ունի։ Հետևաբար, «Աբիգան» նշանակում է ջրային, ջրի համար տրվող վարձ կամ տուրք։ Այն տարածված է եղել ողջ Հայաստանում[47]։

---

38 Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվ., էջ 270—271։

39 Սմբատ սպարապետ, էջ 16։

40 Նույն տեղում, էջ 152։

41 Դիվան, հ. 4, Երևան, 1973, էջ 152։

42 Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX—XIII դդ. խաչքարերը, 1984, էջ 56։

43 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 200—201։

44 Գոշ, էջ 566—567։

45 Նույն տեղում, էջ 32։

46 Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 204։

47 Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվ., էջ 276, 282։

«Արգան» գանձվում էր ըստ օգտագործած ջրի քանակի (հաշվվում էր համայնքին տրվող ջրի քանակը)։ Ջրի քանակը հաշվում էին «բահբերաններով» և ջուր օգտագործած օրերի քանակով։ Գլխավոր առվից դեպի արտերն ու այգիները տանող առվի մեջ ջուրը բաց էր թողնվում 1—2 «բահբերանի» չափով (այնպես, որ հնարավոր լիներ 1 կամ 2 բահի բերանով ջրի հոսքը փակել)[48]։ Ջրի քանակը միջնադարյան Հայաստանում կոչվել է նաև «բահի ջուր», այսինքն այնքան ջուր, որ կարող է անցնել մի բահի խորությամբ ու լայնքով կտրած արխով[49]։

Ուշագրավ է, որ «բահի ջուրը» այսօր էլ, որպես ոռոգման ջրի քանակի միավոր, օգտագործվում է Հայաստանի մի շարք շրջաններում։

ԱՅԳԻՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ։ ՊԱՏՎԱՍՏ ԵՎ ԷՏ.—Ինչպես ցույց են տալիս վկայությունները, միջնադարյան Հայաստանում լավ են տիրապետել այգիների վնասատուների, նրանց դեմ մղվող պայքարի, ինչպես նաև ծառերի բերքատվությունը բարձրացնելու ձևերին ու մեթոդներին։

Ներսես Շնորհալին իր «Գիրք որ կոչի ընդհանրական» երկում այպանում է այն հոգևորականներին, ովքեր ապաշխարանքի ու աղոթքի փոխարեն այգեգործությամբ են պարապում։ Նա ասում է, թե փոխանակ առաքինության արվեստով զբաղվելու, նրանք իրար սովորեցնում են. «Արժան է... այսքան այսպիսի օրինակաւ վաստակել եգամբք, և բրել ձեռամբ՝ փայտատօք և բահիւք և զհակառակ տնկոցն զարմատս, և վերայսս արմատաքի խլել»։ Մի այլ առիթով էլ նա նշում է տնկիների զանազան հիվանդությունների ու նրանց բուժման հնարների մասին. «...ղի ոմանք ի ճճեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թօթափեցան, և այլք արևակէզ եղեալ ողկուզաց՝ չորացան, և կէսք նեխութբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից անգիտանամ զելս վտանգիս եղելոյն։ Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զոմանս պատուաստել տնկոցն որք պտղակորոյսք լինին, և զայլսն զանազան փորձեալ հնարիւք բժշկել ի պատահելոց կրիցն»[50]։

Վերը բերված հատվածում թվարկվում են տնկիների հիվանդության չորս տեսակներ. որդերից վնասվելը, ծաղկաթափը, անբավարար խոնավությունից արևակեզ լինելը, մրգերի ու տնկիների նեխելը։

«Գիրք վաստակոցը» նշում է էտի ժամկետներն ըստ կլիմայական գոտիների[51]։ Էտի մի ուշագրավ տեսարան է պատկերված XIII դ. մի Ավետարանի մանրանկարներում (երկու այգեգործ ծառ են էտում, իսկ երրորդը, որի գոտուն էտոց կա, ծառերի ճյուղերն է ուղղում)[52]։

Մի էտոց էլ պատկերված է 1323 թ. գրված Գլաձորի Ավետարանի մանրանկարներում[53]։

Ըստ աղբյուրների, ծառը կարելի է պատվաստել երկու դեպքում. եթե բերք չի տալիս, և եթե պետք է բարելավել կամ փոխել մրգի տեսակը։ Եղել է պատվաստի երեք եղանակ. 1) հողի մակերեսին, 2) անմիջապես արմատի վրա և 3) հողից վերև՝ ճյուղի վրա[54]։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանում այգիների խնամքը համարվել է նրանց բարձր բերքի կարևոր գրավականը։ Ուշագրավ է, որ պատվաստի և էտի մասին վկայություններում բա-

---

48 Ռ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 229։

49 Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 42։

50 Ներսես Շնորհալի, Գիրք, որ կոչի ընդհանրական, Վենետիկ, 1873, էջ 19—21։

51 «Գիրք վաստակոց», էջ 63։

52 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռագիր № 6305, էջ 109 ա։

53 Նույն տեղում, ձեռագիր № 6285, էջ 121ա։

54 «Գիրք վաստակոց», էջ 128, Է. Մորիկյան, Այգեգործության սկզբնավորումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 1982, էջ 55։

ցատրվում է դրանց կարևոր նշանակությունը այգիների համար, ինչպես նաև կատարման ձևն ու ժամանակը։

Մեզ հասած բազմաթիվ տեղեկությունները հաստատում են, որ քաղաքները ու գյուղաքաղաքները, բերդերն ու ամրոցները, վանքերն ու եկեղեցիները շրջապատված են եղել պտղատու այգիներով ու բանջաբանոցներով։ Միջնադարյան քաղաքների բնակչության մի մասի հիմնական զբաղմունքը հողագործությունն էր։ Այսպես՝ Ագաթանգեղոսը խոսելով Տրդատ արքայի և Լիկանէ Հույնի փախուստի մասին, գրում է, որ նրանք պատսպարվում են բաղաքի դռների մոտ եղած այգիների առուների մեջ[55]։ Արիստակես Լաստիվերցին պատմում է, որ Վասիլ կայսրը իջնելով և բանակելով Հեր քաղաքի մոտ, հրամայում է կտրել քաղաքի ծառատունկերը[56]։ Ակներև է, որ վերջիններս քաղաքից դուրս էին գտնվում։ Սադր-ադ-Դին ալ-Հուսայինին էլ պատմելով Ալփասլանի 1064 թ. դեպի Անի կատարած արշավանքի մասին, վկայում է. «Սուլթանը վրանը խփեց արտի մեջ։ Սրա վրա, քաղաքից, արտերի ջրամատակարարումը հսկող մի քանի հեծյալ պաշտոնյաներ եկան քաղաքից և ցանկացան սուլթանի զինվորներին արտերից դուրս քշել։ Այս տեսնելով սուլթանի զինվորներից մի խումբ անմիջապես հարձակվեց սրանց վրա։[57]։ Այս փաստն ուշագրավ է ոչ միայն նրանով, որ հաստատում է Անի քաղաքի շրջակա արտերի ու այգիների իրողությունը, այլև նրանով, որ վկայում է դրանց ոռոգումը հսկելու մասին։ Մխիթար Գոշի Դատաստանագրքում արգելվում է քաղաքը շրջապատելիս կտրատել այգեստանները. «Եւ զծառատունկս ոչ հարկանել ի պաշարել քաղաքի՝ զպտղաբերս»[58]։ Դվին քաղաքի այգեստանների մասին է վկայում Ստեփանոս Օրբելյանը[59]։

Կարելի է ենթադրել, որ միջնադարյան Հայաստանի քաղաքները բացի միջնաբերդի ներքին պարտեզներից ունեցել են նաև արտաքին պարտեզներ։ Քաղաքները շրջապատող պարտեզների մասին են վկայում նաև օտար աղբյուրները։ Այսպես՝ իտալացի ճանապարհորդ Կլավիխոն պատմելով Մակվի մասին, ասում է, թե նրա բերդի բակում կար մի աղբյուր, որը բավարարում էր թե՛ ամբողջ քաղաքի պահանջները և թե՛ ջրում ներքին ու արտաքին պարտեզները[60]։ Թ. Թորամանյանը իրավացիորեն նշում է, որ Անիի զարիսպներից դուրս ամբողջ դաշտը ծածկված է եղել ծառաստաններով ու այգեստաններով[61]։

Պետք է ենթադրել, որ քաղաքների մրգերի ու բանջարեղենի ամենօրյա պահանջմունքը բավարարել են հենց այդ այգիներն ու բանջարանոցները։

Այգիները միջնադարյան Հայաստանում եղել են առք ու վաճառքի առարկա և ունեցել կարևոր տնտեսական նշանակություն։ Ստեփանոս Օրբելյանը Սյունյաց Սենիքերիմ թագավորի՝ Տաթևի վանքին տված նվերների շարքում հիշում է նաև մի այգի[62]։ Իսկ Քորայրի 1186 թ. մի արձանագրություն հայտնում է, որ ոմն Խաչգունդ գնել է մի այգի ու նվիրել եկեղեցուն, որի դիմաց ստացել է Բ (2) պատարագ[63]։ Նույն եկեղեցու 1276 թ. վրացերեն մի ար-

---

55 «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1914, էջ 32։

56 Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան. 1971, էջ 15։

57 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1960. էջ 59։

58 Գոշ, էջ 30։

59 Օրբելյան, էջ 137—138։

60 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Երևան, 1932, էջ 113—114,

61 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 327։

62 Օրբելյան, էջ 242,

63 Ս. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 170։

ձանագրություն հաղորդում է, որ ոմն Արև Շահնշահ ազատել է եկեղեցուց բռնությամբ խլած այգին և վերադարձրել օրինական տիրոջը[64]։

Վիմագիր աղբյուրներում հիշատակություններ են պահպանվել ոչ միայն այգիների, այլ նաև դրանք ջրելու համակարգերի նվիրատվության մասին։ Այսպես՝ Հաղարծնի վանքի գավթի 1184 թ. մի արձանագրությունից իմանում ենք, որ այդ նվերների մեջ եղել է նաև մի այգի «ի միջնաշինին ջրին»[65]։ Մաքենյաց վանքի մի արձանագրություն հաղորդում է, որ վանքին է տրվել «Ե (5) այգի յԵրևան և Շ (500) առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի. և Բ (2) այգի յՆզեգիս»[66]։

Հետաքրքիր է, որ արձանագրությունների մեջ պահպանվել են ոչ միայն այգիների, այլ նաև այգեպանների նվիրատվության փաստեր։ Հին Կաղուհաս գյուղի մի խաչքարի 1216 թ. արձանագրության մեջ կարդում ենք, որ Վախտանգի որդի Սակը վանքին է նվիրել մի այգի «իւր հողով և կատեպանաւ»[67]։ Բնորոշ է, որ արձանագրության մեջ նշված է այգին հողով նվիրված լինելու փաստը։ Սա թույլ է տալիս ենթադրելու, որ այգին նվիրվել, գնվել ու վաճառվել է նաև առանց հողի։ Այսինքն՝ առուծախի առարկա է եղել ոչ միայն այգին, այլև նրա ծառերը կամ բերքը։ Այս իրողության հավաստումը գտնում ենք Ջալալ Դոլի կին Մամքանի 1251 թ. մի արձանագրության մեջ, որը հայտնում է, թե նվիրատուն շինել է մատուռը և նրան նվիրել «Ալծո հող եւ այգի զիմ այգոյն պտուղն»[68]։ Գոշավանքի մի արձանագրություն հաղորդում է, որ վանքին, այգու հետ միասին, տրվել է նաև «շինական մի ազատ»[69]։ Վերոհիշյալ Սակի 1224 թ. մի արձանագրություն նույնպես հիշատակում է այգու և այգեպանի նվիրատվության փաստ. «...ետու եւ զիմ այգին ի ճաք իւր կատապանովն»[70]։ Իսկ Մակարավանքի մի արձանագրությունից, որը Ս. Բարխուդարյանը թվագրում է XII—XIV դդ., տեղեկանում ենք, որ ոմն Խարիրեկ և իր ամուսին Նանան վանքին են տվել «այգին յարքունիքն այգեպանով»[71]։

Միջնադարյան հայ իրականության մեջ տարածված է եղել նվիրել ոչ միայն ամբողջ այգին կամ նրա ողջ բերքը, այլ նաև նրա բերքի կամ այգու կեսն ու քառորդ մասը՝ չարեքը։ Օրինակ՝ 854 թ. մի արձանագրության մեջ նշվում է, որ ոմն Արջուկի կին վանքին է նվիրել իր այգիներից մեկի կեսը[72]։ Կեչառիսի վանքի մի արձանագրության մեջ էլ նշվում է, որ վանքին է տրվել այգու չարեքը (քառորդ մասը)[73]։ Այգու չարեքի նվիրատվության մասին է հայտնում նաև XIII դ. մի արձանագրություն[74]։

Վկայությունները հիմք են տալիս պնդելու, որ գնվել, վաճառվել և նվիրվել են ոչ միայն այգիները, այլ նաև հողամասեր։ Օրինակ՝ Գոշավանքի XIII դ. մի արձանագրությունից պարզվում է, որ ոմն Աւդասէր վանքին է տվել այգու տեղ[75]։ Մեծիրանից Ս. Հակոբա վանքի սրահի հարավային պատի արևմտյան մասում պահպանված արձանագրությունն էլ հաղորդում է. «Թագաւոր Ջալալայ Դուլին հրամանաւ ես Սմպատ, որդի Հեչբին տվի էգա տեղ Գրիգորոյ»[76]։

---

64 Նույն տեղում, էջ 175։

65 Դիվան, հ. 6, Երևան, 1977, էջ 85։

66 Դիվան, հ. 4, էջ 290։

67 Դիվան, հ. 5, Երևան, 1982, էջ 114։

68 Դիվան, հ. 5, էջ 80։

69 Դիվան, հ. 6, էջ 70։

70 Դիվան, հ. 5, էջ 116։

71 Դիվան, հ. 6, էջ 184։

72 «Վիմական տարեգիր», էջ 3։

73 Մ ե ս ր ո վ բ Ս մ բ ա տ ե ա ն ց, Դեղերքունի ծովաղարդ գավառ, որ այժմ նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1896, էջ 353։

74 Նույն տեղում, էջ 314։

75 Դիվան, հ. 6, էջ 67։

76 Դիվան, հ. 5, էջ 15։

Ելնելով վերը բերված փաստերից, կարելի է եզրակացնել, որ այգեպանությունը միջնադարյան Հայաստանի ամենատարածված զբաղմունքներից մեկն էր։ Այգեգործությունը տարածված է եղել ոչ միայն գյուղերում, այլև գյուղաքաղաքներում ու քաղաքներում։

Գոյություն է ունեցել այգեգործության վերաբերյալ գիտելիքների որոշակի համակարգ, որն իր արտահայտությունն է գտել թե՛ հայկական և թե՛ օտար աղբյուրներում։ Նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ միջնադարյան այգեգործության մեջ լայնորեն կիրառվել են պատվաստն ու էտը, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարն ու այգիների պարարտացումը։

Կարևոր նշանակություն ունի նաև ոռոգման համակարգի հարցը, քանի որ Հայաստանի կլիմայական պայմաններում ավելի արդյունավետ էր ոռոգելի այգեգործությունը։ Այդ տեսակետից ուշագրավ է «աբգան» կամ «ավզան» հարկը։

САДОВОДСТВО В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Г. В. БЕГЛАРЯН

Резюме

Садоводство являлось одним из самых распространенных видов сельскохозяйственной деятельности в средневековой Армении. Оно было развито не только в селах, но и в городах и поселках. Определенная часть населения средневекового города была занята обработкой и уходом за пригородными садами и огородами. В климатических условиях Армении особенно эффективно развивалось ирригационное полеводство. Этим было обусловлено богатство ирригационной системы. Кроме земельных налогов в средневековой Армении были установлены налоги за воду.

GARDENING IN MEDIEVAL ARMENIA

BEGLARIAN H. V.

Summary

Gardening was one of the most spread economic occupations in medieval Armenia. It developed not only in villages but also in settlements and towns. A certain part of the medieval town inhabitants engaged in the cultivation and care of suburban gardens and vegetable plots. Particulary the tillage of fields under irrigation developed productively in the climatic conditions of Armenia; witness the advanced system of irrigation. Beside the land tax in medieval Armenia there also existed a water tax.